



Հավատանք, որ փոխենք
ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ս Ս Ն Օ Ր Յ Ա Թ Ե Ր Թ
Այունյաց երկիր
www.syuniacyerkir.am

Գինը 100 դրամ: ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ
25 ԱՊՐԻԼԻ 2012թ. • № 10 (251)

Հավասար մեր ուժերին ու փոխենք իրականությունն այնպես, որ հաջողություններ լինեն ոչ միայն բոլորին, այլև յուրաքանչյուրին: Փոխենք կյանքի թայմաներ, մարդկանց աշխատելու և վաստակելու նոր հնարավորություններ ստեղծենք, օգնենք արդարությամբ հաղթանակել ամենուր, վերացնենք աղբասությունը, արագադրեք վերափոխենք տունդարձի և սեփական երկրի ու նրա աղագայի հանդեպ անսահման հավասարադրեք իրեն՝ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՄ**: Մենք դա իսկապես կարող ենք, և ուրիշ ոչ ոք մեր փոխարեն չի անելու: **Ուրեմն հավասար մեր, որ փոխենք: Մեծով ու փոքով, շինականով ու գիհականով, հաջողակով ու դեռ փնջրողով: Հավասար մեր, որ փոխենք: ՄԵՐՔ ՍԱՐԳՍՅԱՆ**



ԱՅՅԵՔԱՐՏ ■ Ծնվել է 1984թ. փետրվարի 13-ին Սյունիքի մարզի Գորիս քաղաքում: 2002թ. գերագանց առաջադիմությամբ ավարտել է Գորիսի Սերո Խանզադյանի անվան N6 միջնակարգ դպրոցը: 2006թ. ավարտել է Գորիսի պետական համալսարանը և ստացել մաթեմատիկայի ուսուցչի որակավորում: 2006-08թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում և զորացրվել ավագի կոչումով: Համապատասխան վերապատրաստում անցնելուց հետո 2009թ. աշխատանքի է ընդունվել Գորիսի N4 ավագ դպրոցում որպես օտար լեզվի ուսուցիչ: 2006թ. Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է: Ամուսնացած է:

**ՀԱՅԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ազգային ժողովի
պատգամավորության
թեկնածու N37
ընտրապարաժքում**

**ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ**

**№37 ընտրապարաժքում
ՀՀ ԱԺ պատգամավորության
թեկնածու
Հայկ Գրիգորյանի**

Սիրելի հայրենակից

Ես այունեցի եմ և հպարտ եմ դրանով: Հպարտ եմ, որ իմ ապուսպաբերով խրված եմ այս սրբազան ու անարատ հողի մեջ, հպարտ եմ իմ նախնիներով, որ իրենց մաքառումներով միշտ տեր եմ եղել այս հողին, մաքուր եմ պահել հայի արժանապատվությունը, իսկ օջախներում, հայ ժողովրդի անենադժնդակ ժամանակներում անզամ, անթեղած պահել անկախ պետականություն ունենալու գաղափարը:

Ինձ պատգամավորության թեկնածու է առաջադրել ՀՀԿ-ն: Ուստի եմ ՀՀԿ նախընտրական ծրագրին այն հիմնարար փաստաթուղթն է, որով կառաջնորդվեմ իմ գործունեության ընթացքում: Միաժամանակ, կան հարցեր, որոնց առավել ուշադրություն կդարձնեմ, ինչի համար եմ առաջարկում եմ նախընտրական ծրագիրս: Այն կազմելիս առաջնորդվել եմ կարևոր երկու սկզբունքով. նախ՝ հեռու մնալ վերամբարձ, շատ դեպքերում պատգամավորի գործառույթներից դուրս փնջրտուններից և երկրորդ՝ լինել իրատես, առաջ քաշված խնդիրների լուծման ակունքը փնտրել հնարավորության և իրականության մերդաշնակության մեջ:

Լինելով երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, չունենալով քաղաքական կամ վարչական աշխատանքի երկարամյա փորձ, այնուամենայնիվ, շատ լավ գիտակցում ու պատկերացում եմ պատգամավորի առաքելությունը, մեր ժողովրդին հուզող սոցիալ-տնտեսական խնդիրները, մեր հանրապետությանը սպառնացող մարտահրավերները:

Ժամանակակից աշխարհը դիմամիկ փոփոխությունների հորձանուտ է: Այդ փոփոխությունները երբեմն նոր դժվարություններ են հարուցում ազգային ու պետական մեր ընթացքի առջև: Միասին լինենք, որպեսզի կարողանանք հաղթահարել մեր հայրենիքի առջև ծառայած դժվարությունները, միասին լինենք, որպեսզի հզորացնենք նախնիներից ժառանգած մեր հայրենիքը, միասին լինենք, որպեսզի կարողանանք պահել ու հարստացնել ազգային արժեքները՝ դրանով իսկ մեր ներդրումն ունենալ համաարդկային արժեքների մեջ և այդպես ներկայաժամ համաշխարհային հանրությանը:

Լինելով մանկավարժ ընտրվելու դեպքում նախընտրելու եմ իմ պատգամավորական գործունեությունը ծավալել ԱԺ կրթության և գիտության մշտական հանձնաժողովում (թեև գործունեությունս չեմ սահմանափակի այդ ոլորտով),



ՔԱՐՈՋԱՐՇԱԿ №37 ԸՆՏՐԱՏԱՐԱՌՔՈՒՄ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «Կոչ եմ անում մայիսի 6-ին քվեարկել հոգուկ ՀՀԿ-ի եւ Հայկ Գրիգորյանի»

Նախագահ Սերժ Սարգսյանն ապրիլի 16-17-ին աշխատանքային այցով գտնվում էր Սյունիքի մարզում:

Հանրապետության ղեկավարն այցելել է «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, որտեղ ծանոթացել է ընկերության զարգացման ծրագրերին եւ մասնակցել ընդլայնված ու արդիականացված կոմբինատի ֆլուտացիոն մասնաշենքի բացման արարողությանը: Սահմաններն Ազարակում նախագահն այցելել է նաեւ քաղաքի վերանորոգված մշակույթի կենտրոն, որտեղ համայնքի համաֆինանսավորմամբ, Ազարակի եւ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատների աջակցությամբ եւ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել են 80,5 մլն դրամի աշխատանքներ: Մշակույթի կենտրոնն արդեն գործում է՝ իր հանդիսությունների դահլիճով, մարզասրահով, այլ հնարավորություններով: Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում Սերժ Սարգսյանն այցելել է Մեղրու նոր կառուցվող բժշկական կենտրոնի շինարարակ, ծանոթացել իրականացվող աշխատանքների ընթացքին: Ծրագիրն սկսվել է 2011թ. եւ նախատեսվում է ավարտել 2013թ. վերջին:

Հանրապետության ղեկավարն այնուհետեւ մասնակցել է «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ընկերության հանրաքարի մանրացման տեղամասի եւ Կապանի բժշկական կենտրոնի վերանորոգված մանկական բաժանմունքի բացման արարողություններին:

Կապան քաղաքի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի երկհարկանի մասնաշենքը կառուցվել է 1960-ական թվականներին: Այն վերանորոգվել է 1980թ., իսկ 2005թ. ենթարկվել է կոսմետիկ նորոգման եւ կարիք ուներ լուրջ վերանորոգման:

Հիվանդանոցի մանկական բաժանմունքը տարեկան սպասարկում է 400-450 երեխա: Հանրապետության ղեկավարին զեկուցվել է, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում վերանորոգված Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքում տեղադրվել է ջեռուցման համակարգ, ամբողջովին փոխվել են ջրամատակարարման, կոյուղու եւ էլեկտրական համակարգերը, միջհարկային ծածկերը փոխարինվել են բետոնյա ծածկերով, կատարվել է մասնաշենքի տարածքի վերահատակագծում, արտաքին պատերի հարդարում եւ հիդրոմեկուսացում, իսկ տանիքն ամբողջովին փոխվել է: Բացի վերանորոգումից, ծրագրի շրջանակներում բաժանմունքը նաեւ վերակահավորվել է, համալրվել է նոր սարքավորումներով եւ ստացել շտապօգնության մեքենա:

Բաժանմունքի վերանորոգումից հետո նախատեսվում է բուժանձնակազմի 10-12 աշխատատեղի ավելացում, իսկ սպասարկվող երեխաների քանակը՝ մինչեւ 600-650: Հիվանդանոցի մանկական բաժանմունքում բուժվում են սոմատիկ հիվանդություններով երեխաներ: Բաժանմունքն ունի նաեւ ինտենսիվ թերապիայի սենյակ: Առաջին հարկաբաժնում կառուցվել է գործուն է մտավոր եւ ֆիզիկական զարգացման խնդիրներով երեխաների վերականգնողական կենտրոն: Նախատեսվում է ստեղծել նորածնների վերակենդանացման եւ ինտենսիվ բուժման ստորաբաժանում եւս, որը կապասարկի նաեւ Սյունիքի մյուս տարածաշրջանների նմանատիպ խնդիրներ ունեցող նորածններին:

Սյունիքի մարզ աշխատանքային այցի երկրորդ օրը՝ ապրիլի 17-ին, նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Կապանի երկրագիտական թանգարան, որտեղ ՀՀ նախագահի կարգադրությամբ նախատեսված միջոցառումների ժամանակացույցով թանգարանի երկու մասնաշենքեր եւ պատուհանները, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ, վերականգնվել է ջեռուցման համակարգը, իրականացվել են արտաքին բարեկարգման աշխատանքներ: Այդպիսով լուծվել են թանգարանային արժեքների պահպանության, ամվտանգության, թանգարանային նյութերի մշտական, ժամանակավոր



ցով թանգարանի երկու մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները ս.թ. մարտի վերջին ավարտվել են: Հանրապետության ղեկավարին շրջայցի ժամանակ զեկուցվել է, որ երկրագիտական թանգարանի հիմնանորոգման համար 2011թ. ընթացքում հատկացված գումարով հիմնվին փոխվել են երկու մասնաշենքի տանիքները, հիմնանորոգվել են հատակները, փոխվել են դռները եւ պատուհանները, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ, վերականգնվել է ջեռուցման համակարգը, իրականացվել են արտաքին բարեկարգման աշխատանքներ: Այդպիսով լուծվել են թանգարանային արժեքների պահպանության, ամվտանգության, թանգարանային նյութերի մշտական, ժամանակավոր



Սերժ Սարգսյանի՝ սյունիքյան վերջին այցի դրվագ:



17.04.2012, Սերժ Սարգսյանը «Շամբ բիզնես» ընկերությունում:



եւ բացօթյա ցուցադրությունների կազմակերպման, երկրագիտական թանգարանի մշակութային արժեքների հանրահռչակման խնդիրները: Կապանում հանրապետության ղեկավարն այցելել է նաեւ կաթի եւ մսի արտադրությամբ ու վերամշակմամբ զբաղվող «Վամաքս Գրուպ» եւ «Մարիլա» ընկերություններ, ծանոթացել իրականացված ներդրումներին, արտադրության պայմաններին ու զարգացման ծրագրերին:

Սյունիքի մարզ աշխատանքային այցի ընթացքում նախագահն այցելել է Գորիսի «Սոցիալական տուն» ծրագրի շրջանակում քաղաքում կառուցվող բնակարանների շինարարակ, ծանոթացել ծրագրի «Գորիս-2» փուլի աշխատանքների ընթացքին: Նախագահին զեկուցվել է, որ Շվեյցարիական զարգացման եւ համագործակցության գործակալության եւ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Սոցիալական տուն» աջակց պայմաններով՝ ծրագրի շրջանակում 2011թ. մեկնարկած Գորիսի սոցիալական տան կառուցման այս փուլում կլուծվի սոցիալապես անապահով, վազոն-տնակներում բնակվող փախստականի կարգավիճակ ունեցող 22 ընտանիքի բնակարանային ապահովության հարցը: «Գորիս-2» ծրագրով կառուցվում է եռահարկ շենք, որն ունենալու է 20 բնակարան: Նշվել է, որ ծրագրի առաջին

պիլոտային փուլում, կառուցվել են 2 երկհարկանի սոցիալական տներ՝ 13 բնակարանով, որոնք հիմնականում բնակեցվել են փախստականներով եւ համայնքի սոցիալապես խիստ անապահով ընտանիքներով: Սյունիքի մարզի Դարբաս համայնքում Սերժ Սարգսյանն այցելել է «Շամբ բիզնես» ընկերությանը պատկանող պահածոների եւ հանքային ջրերի գործարաններ եւս, որտեղ հանրապետության ղեկավարին ներկայացրել են Շամբում տեղական այս արտադրությունների հիմնումից ի վեր իրականացված ներդրումները, հիշյալ գործարանների արտադրական հզորությունները, զարգացման ծրագրերն ու ստեղծված աշխատատեղերը:

Ընկերությունում նշել են, որ պահածոների գործարանում արտադրության համար օգտագործվող պտուղ-բանջարեղենը մթերվում է տարածաշրջանի գյուղերի արտադրողներից: 2011թ. արտադրանքի ծավալը, ընկերության պատասխանատուների հավաստմամբ, կազմել է մոտ 175 տոննա, որից 80%-ն արտահանվել է ՌԴ: Գործարանի աշխատանքներում ներգրավված է 60 աշխատակից: Նախատեսվում է 2012թ. աշխատակիցների թիվը հասցնել 120-ի: Անձնակազմի միջին աշխատավարձը կազմում է 70 հազ. դրամ: Հանքային ջրերի գործարանում, որտեղ արտադրվում են ապակե եւ պլիսթիկեմային տարաներով հանքային ջրեր ու լիմոնադներ, արտադրողականությունը կազմում է ժամում 5000 շիշ: Արտադրանքի մեծ մասն արտահանվում է: Գործարանն ունի 53 աշխատակից: 2012թ. նախատեսվում է այդ թիվը հասցնել 70-ի: Նախագահ Սերժ Սարգսյանը կարեւորել է տեղական արտադրությունների հիմնումն ու զարգացումը եւ հաջողություններ մաղթել հիշյալ ընկերությունների հետագա ծրագրերին:

Սիսիանի՝ Սիսակ Գահապետի անունը կրող հրապարակում նախագահը սիսիանցիներին կոչ է արել մայիսի 6-ին քվեարկել հոգուկ ՀՀԿ-ի եւ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու Հայկ Գրիգորյանի:



ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Բնածին օծվածություն, որ լրացնում է կենսափորձի պակասը

Զգալ հասարակական զարգացման փորձաքննությունը, ձեռքը միշտ պահել ժամանակի զարկերակի վրա եւ քայլել ժամանակին համընթաց: Սա բնորոշ է Հայկ Գրիգորյանին: Չնայած երիտասարդ տարիքին՝ նա կարողացավ փնտրելու իր ոլորավորների մեջ ճիշտ գտնել իր նպատակին փանող ճանապարհը եւ զերծ մնալ անհամար դափողություններից: Նա կարողացավ իր բնական փառքը քննադատաբար մտալով՝ գտնել իր ճշմարտությունը: Գրիգորյանը, որ ապրեցնող է: Եվ Գորիս անվանյալ այս քաղաքում նրա մասին արտահայտվողների կարծիքների մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ Հայկ Գրիգորյանի ճշմարտությունն իրական է, այն փուչիկ չէ: Եվ ճշմարտությունն այդ նաեւ Գորիսի ճշմարտությունն է: Իսկ Հայկ Գրիգորյանը Գորիսի որդին է:


ԶԱՐԵՅ ԳՐԻԳՐՅԱՆ

Գորիսի պեպրակային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ֆիզիկաթվաթվությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու Հայկ Գրիգորյանը 2002/2003 ուստարում Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանից գերագույն գնահատականներով տեղափոխվել է Գորիսի պետական համալսարանի բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի բաժնի: Սովորելու տարիներին նա ակտիվորեն մասնակցել է համալսարանում կազմակերպված միջոցառումներին, եղել է ուսխորհրդի նախածեռնող անդամներից, հասարակական աշխատանքներում եղել է օրինակ: Նա ցուցաբերել է բարեխիղճ եւ պատասխանատու վերաբերմունք ուսումնառության հարցերում: Գորիսի պետական համալսարանի կոլեկտիվը հպարտության զգացումով ընդունեց այն փաստը, որ մեր համալսարանի շրջանավարտը ցանկանում է լինել երկրի օրենսդիր մարմնի կազմում՝ պատգամավորության թեկնածու առաջադրվելով N37 ընտրատարածքում: Հուտով ենք, որ նա կստանա Գորիսի պետական համալսարանի աշխատակիցների աջակցությունը եւ կստանա մեր հետագա գործունեության մեջ:

Գորիսի N4 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Երբեմն-երբեմն ծնվում են մարդիկ ու իրենց հետ բերում առաքինության այնպիսի ու այնքան պաշար, որ նրանց շուրջը կանգնեցնեն հազարավոր մտերմ սրտեր: Այդպիսի սկիզբը վերապահված է միայն ընտրյալներին, եւ ժողովրդական իմաստությունը, թե կենսափորձը զալիս է ապրած տարիների հետ, նրանց չի վերաբերվում: Հայկ Գրիգորյանի կյանքում շատ թվականներ չկան՝ այս թվականից այն թիվը, այն թվականից այսպես՝ կենսափորձն ազդարարող... բայց ինչքան ասես՝ բարություն, նպատակասլացություն ու խիղճ կա 30-ը դեռ չբոլորած երիտասարդի մեջ: Այլ կերպ ասած՝ հայտնի այն ճշմարտությունը, որ բնածին օծվածությունը լրացնում է կենսափորձի պակասը, վերաբերվում է Հայկին: Այդ համոզվածությանը եկանք դպրոցում համատեղ աշխատելու տարիներից:



Գորիս, Սբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին:

Գորիսում ճանաչում են նրան, կարճ ժամանակում նա կարողացավ ստեղծել իր դպրոցը՝ Շքապիրի լեզուն ուսուցանելով եկող սերունդներին: Ու ծնողները ձգտում են, որ իրենց երեխան աշակերտի Հայկին ոչ միայն անգլերենի դասեր առնելու, այլև առաքինության: Դպրոցահասակ գորիսցիները հպարտությամբ է փաստում՝ ես Հայկի աշակերտն եմ: Դրա ակամատեղ եղավ Գորիսի N4 ավագ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը: Նրա գրասեղանին երկու գիրք կա, մեկը ինքն է շարունակում սովորել, մյուսով սովորեցնում է իր աշակերտներին... Ավ. Խահալյանն է ասել՝ «Սովորել ես սովորեցնել՝ նշանակում է ապրել»:

Առաջադրված թեկնածուն թեկնաբար է, լավագույնս իրագրել է Հայաստանի թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ գիտատեխնիկական առաջընթացին: Նա հասուն է քաղաքի առջև ծանցած խնդիրներին լուծում տալու: Նրան հատուկ են նպատակասլացությունը, դժվարին ու պատասխանատու գործին անձնվիրաբար ձեռնամուկ լինելու պատրաստակամությունը:

ԿԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Գորիսի Յու.Բախշյանի անվան N3 դպրոցի փնտրել

Հայկ Գրիգորյանը Գորիս քաղաքում ճանաչված է որպես բանիմաց մտավորական: Նրա մի քանի էլույթներից դատելով՝ կարող ենք պատկերացում կազմել նրա ինտելեկտուալ զարգացածության, լայն մտահորիզոնի, աշխարհայացքի մասին: Առաջադրված թեկնածուն թեկնաբար է, լավագույնս իրագրել է Հայաստանի թե՛ քաղաքական, թե՛ հասարակական, թե՛ գիտատեխնիկական առաջընթացին: Նա հասուն է քաղաքի առջև ծանցած խնդիրներին լուծում տալու: Նրան հատուկ են նպատակասլացությունը, դժվարին ու պատասխանատու գործին անձնվիրաբար ձեռնամուկ լինելու պատրաստակամությունը:

Մեր կիսագնի բարձր առյուծներ, համայնքի խնդիրներով հանդես կգա խորհրդարանում:

ԳՐԻԾԱ ՍԱՆՈՒՉԱՐՅԱՆ Գորիսի N4 ավագ դպրոցի ուսուցիչ

Ինչպես ես, այնպես էլ ժողովուրդը, հավատացած են, մեր դեմքեր է ուզում տեսնել Աժ-ում: Անձամբ ճանաչում են N37 ընտրատարածքում գրանցված թեկնածուներից շատերին: Բոլորին ցանկանալով հաջողություն ընտրապայքարում, ուզում են մի քանի հարց ասել Հայկ Գրիգորյանի մասին, որովհետև շրջանառվում է նրա երիտասարդ ու անփորձ լինելը: Փորձը ձեռք է բերվում աշխատանքային գործունեության ընթացքում: Հայկ Գրիգորյանին ճանաչում են 2009թ., երբ աշխատանքի անցավ N4 ավագ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցիչ: Չճանաչած երիտասարդ տարիքին, շատ շուտ մերժեց աշակերտական,

ծնողական, մանկավարժական կոլեկտիվների հետ, դարձավ աշակերտների սիրելի: Աշխատանքի նկատմամբ ունեցած պատասխանատու վերաբերմունքի շնորհիվ լուրջ հաջողությունների հասավ անգլերենի ուսուցման մեջ: Աշխատելու էներգիայով լեցուն, բանիմաց իմ երիտասարդ գործընկերոջը ցանկանում են բարի երթ Աժ տանող ճանապարհին:

ԲԼԻՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հայկ Գրիգորյանը երիտասարդ է, վստահում եք նրան

- Երիտասարդ լինելն ինքնին այցետոմս է դեպի Աժ: Երիտասարդներից հայտը կենսարար ծառի մշտապես ջուրն է, եւ վաղը չենք կանգնի կտրած տաշտակի առջև:
- Բոլոր հասարակագրերում ու ժամանակներում երիտասարդությունը եղել է հասարակության շարժիչ ուժը: Պետք է նրանց վստահել, իսկ վստահությունը ստուգել: Այնպես որ՝ վստահում ենք Հայկին:
- Խորհրդարանն այսօր երիտասարդանում է: Ուրախ ենք, որ մեր քաղաքի երիտասարդին ես այդ երիտասարդների շարքերում ենք տեսնելու:
- Իհարկե, վստահում են: Իսկ այդ վստահությունը ես կարտահայտեմ մայիսի 6-ին՝ իմ քվեմ տալով Հայկ Գրիգորյանին:
- Կուրուսեցի է, չէ՞: Կուրուսեցին հիբիյա վստահությունը կուրցըրալ:
- Լավ խոխայա: Լավ ջախիլա: Լավին պիտի ծընապա տաս: Թա տվիր, նա կյանքն էլ կտա, վեր վստահողի նամուսը տափը չտա: Բա, տրա համար էլ Հայկին վստահում ենք:

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՔ ՀԱՅԿ ԳՐԻԳՐՅԱՆԻ

- Բա ինչ ենք անում, կվատում ենք: Ետ յարուզ օրիշ քաղաքի ջախիլին սպորտում չենպիտո կտառանան, իսկ մեր կուրուսեցին կարալ չի:
- Հայկը կարա թացը չորից ճուկի, կարա գիղա վեր օրենքին ծեն տա, վերին չէ: Ու ասի, թե խե չի համաձայն: Թող քինա Աժ:
- Սեր վեդի, մեր ժիր մարդը մեր հարցն ավելի լավ կպիցրցնի խորհրդարանում: Հալալ ա էտ տղին: Եթե ռիսկ ա ըրալ, ուրեմն լավ կլինի:

ԱՐՄ ԳՐԻԳՐՅԱՆԻ ԶԱՆՁՆԱՊԱՐԿՈՒՄ ԵՔ ՏԵՆՈՒՄ ՀԱՅԿ ԳՐԻԳՐՅԱՆԻ

— Միանշանակ՝ կրթության: Այսօր կրթության բնագավառում շատ խնդիրներ կան, որոնք լուծում են պահանջում: Իսկ դրա նպատակը մեկն է՝ հիմնարար գիտելիք պետք է ստանա աշակերտը, ուսուցիչն էլ՝ ուսուցիչ մնա:

ՃԱՆԱԶՈՒՄ ԵՔ ՀԱՅԿ ԳՐԻԳՐՅԱՆԻ

- Չէ, հեռվից են տեսել: Բոյով—բուսաբով տղա է: Չի կարող նման արտաքինի մեջ վատ ու տկար հոգի լինել: Համ էլ արդեն քարոզարշավ է, մոտիկից կճանոթանամ, մի երկու հարց էլ կտան:
- Հետը չեն չփվել: Ընդամենն անցել են կողքով: Մի քիչ շատ չէ՞ լուրջ:
- Շատ է ինքնավստահ:
- Անվստահն ում է պետք: Անվստահ մարդուց հեռու փախչի, նրանից լավ հոտ չի փչում: Այ, ինքնավստահ ուրիշ է՝ դա հաղթանակի հենքն է եւ արծ ճառ հետ քայլ գցել: —Զեն ճանաչում, դրա կարիքն էլ չունեն, էն որ անունը Հայկ է, դա բավական է:



ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«Ես կհասցնեմ, որովհետեւ ինձ համար ամենակարեւորը... ինքնահարգանքն է»

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐԻ ԷՄՔԻՋ

Այս օրերին, անկախ այն հանգամանքից, թե մեր՝ արդեն ոչ այնքան նորանկախ երկրի, մեղմ ասած, ոչ անհոգ քաղաքացիները որքանով են ապրում քաղաքական զարգացումներով, երկրի քաղաքական կլիմայով ու կանխատեսումներով, միեւնույն է՝ մթնոլորտն այնքան գերհագեցած է ընտրություն բառի հոլովումներով, զանգվածային լրատվամիջոցներն այնքան են քաղաքական կուսակցությունների... անգերազանցելի ժենձեմ-համադամներն առաջարկում-պարտադրում, որ մարդն ակամա այդ տիրույթում է՝ անկախ հավատի ու սպասելիքի գործակիցներից...

Երբեմն անկեղծ արմանք-զարմանքի նյութ են հար չհոգնող ու հար իրենց... անենափրկիչ նախընտրական ծրագրերն աչքի ուսպնյակ ու ուղեղի միջուկ միտրող քաղաքական այրերը, որոնցից ոմանք, ընտրողից էլ ավելի, կասկածի տակ չեն առնում իրենց ծախողունը, բայց, լիդեր լինել-մնալու ոյութանքի՞ն, թե՞ ծվեն փախցնելու իբր քողարկած հույսին այլեւս անձնատուր են:

Ու ներքին մի ակնածանք էլ, անկախ տեսակիցը, այն մարդկանց հանդեպ ես ունենում, որ վերանբարձ չհնչի ու չասեմ՝ քաղաքացիական, պարզապես կանգ, գիտակցված համառություն ու սեփական ուժերի նկատմամբ վստահություն են ունենում թափանցել-մտնելու ոչ ոյուրին, անկանխատեսելի հործանուտներով մեր երկրի օրենսդիր հարթությունը:

Բայց, ակնածանքիդ ու հիացումիդ հետամուտ ու հաճընթաց, նաեւ տագնապ ես ունենում հեռվից հեռու թու ու հանրության չափորոշիչներով էլ ընդունելի այն մարդկանց, այն անհատականությունների համար, ովքեր, մի կողմ թողնելով անհետարից, հանդարտ հունով իրենց կյանքը, կտրուկ անցումի փորձ են անում դեպ մեծ քաղաքականություն, քաղաքականություն, որտեղ խաղի, վավերից էլ ավելի, չզրված կանոններ կան, որտեղ միշտ ուժեղից ուժեղը կա, որտեղ կողք-կողքի են ոչ միայն ինտելեկտն ու սրտացավությունը, արիեստավորությունն ու բարեկրթությունը, այլև՝ դնակից ամենամեծ կտորը «բրոնյա» անելու միակ... մտածումը, ամենակարողության մարտնչումն գինեյան լինելու մենաշնորհը...

Հայկ Գրիգորյան պատգամավորության թեկնածուն. ակնածանք, ուրախություն, մտայնություն...



Հայկ Գրիգորյանը Շաքեի ջրվեժում:

Այս՝ մի քիչ հեռվից գալու իմ ցանկությունն, ակամա նախարկվեց ոչ թե N37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջարկված, հանրապետական կուսակցության անդամ Հայկ Հովհաննեսի Գրիգորյանի, այլ Գորիսի մեր՝ Գետափնյա թաղամասի սիրված, խոհեմ երեխա Հայկիկի, կամային հավաք արժեքներով ու չափավորությամբ առանձնացող, իր համար իր ճանապարհը հարթող Հայկի մասին:

Մի զուսպ երիտասարդի մասին, որ կարողացավ ոչ ոյուրին մեր ժամանակներում ոչ միայն գտնել իր հացը վաստակելու, իր ընտանիքին պատվար լինելու քրտինքով ու նպատակամտությամբ սնուցվող ակը, չընկրկել դժվարությունների հերթագայությունից, այլև՝ միշտ հարաբերական համարել իմացականի «վերին շեն սավածը»՝ աշխատել ու աշխատել...

Եվ, որ անթաքույց էր, միշտ մնալ պարկեշտ՝ արժանապատվության ու չափի զգացողության նախարկամբ:

Ես կարող էի լրագրողական... անմեղ հնաբը անել, ձեւանալ,

որ ես Հայկին հասցրի ճանաչել որպես լրագրող միայն: Չէ՛, ես նրան գիտեմ, ճանաչում եմ, իսկ այս, ինձ համար այնքան էլ չճշտված ժամրի նյութիս համար, ես իսկապես արդեն, որպես լրագրող ու ընտրող նաեւ, փորձեցի ոչ այնքան առավել մոտիկից ճանաչել նրան, որքան հասկանալ Հայկին ու նրա որոշումը, թերթը ու բացել այն էջերը, որտեղ, որոնց լուսանցքներում մշուկներ անելու կարիքը կլինի...

Բնական է ենթադրել, որ նաեւ մտայնությունը կա՝ գուցե կուսակցությանը չհակադրվելու... ուշիմություն՝ լինե է պատճառը կամ, գուցե, գերկտրուկ շրջադարձով աղբեմայի հոսք զգալու հողեղենին բնորոշ՝ ես-ի հուշո՞ւնը կա...

Հայկին հանդիպելուց առաջ մարդկային անկեղծ հետաքրքրության մղումը կար, եւ այս մտայնությունների պատասխանները ստանալու ակնկալիքը, որովհետեւ քաղաքականությունը, բացի իրեն վերապահված ահռելի՝ գուցե մուլտակապահական դերակատարություն-առաքելությունից, նաեւ, ավազ, հաճախ տխուր ու անբարո մակդիրներով համեմված, թեսավոր խոսք դարձած նախադասություններ

ի... ենթակա է...

Բայց, ամենավաղ մանկությունից ճանաչ լինելով Հայկի տեսակին, մարդկային նկարագրին, նաեւ համոզմունքի չափի վստահությունը կա, որ այս տեսակի մարդիկ թե անգամ... առաջանալ են ուզում, ապա, կարելվույն չափով, մի լավ, մի օգտակար բան անելու ցանկությունը միայն:

Ու՝ թեկուզ իրենց ուժերի պատածին, իրենց հնարավորությունների արտոնումի սահմաններում:

Ու՝ ոչ մեկին կամ նվաստացնելու, կամ թերարժեքելու գնով:

Ու՝ ոչ բոնուսային միավորներ պարանոցից կախելու համար:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԿ, ՈՐ ԱՆՊԱՃՈՒՅՑ ԷՐ ՀԱՍԱՐԿ ԼԻՆԵՆՈՒ ՉԱՓ

Իր կյանքի այս մեծ իրադարձության շեմին, ինձ ցանկալի էր Հայկին տեսնել ու գրուցել մի գավաթ սուրճի շուրջ ոչ թե սրճարանում, գրասենյակում կամ շտաբում, այլ հենց իր հարկի տակ, հարազատների շրջապատում, որովհետեւ այդժամ է միայն, որ թեզ երեւակվող... էկրանին արտածվում է նաեւ ընտանեկան

կոնդի կենդանի աուրան, այդժամ է, որ իրականի ու հնարավորի սահմաններում «SOS»-ն է թարթվում...

Միանգամից՝ Գորիսի Գետափնյա թաղամասում գտնվող Հայկենց բնակարանի ընտանեկան հարկի տակ չկար ձեւակառության տարր. պարզ էր, հասարակ լինելու չափ անպահանջ:

Մայրը, կինն ու եղբայրը եւ ուրախ ու հպարտ էին, եւ յուրովի մտազբաղ ու մտահոգ էին...

Հայկն անկեղծ գրուցակից էր...

«Ես վճիռ կայացնելուց՝ առաջարկվելուց առաջ, մի հիքնահորդոր ունեի՝ Հայկ, դու պիտի հավատարիմ մնաս քո տեսակին, հավելումներդ պիտի լինեն միայն հանրօգուտ ու անընդհատ զարգացումի մղումը, ճշմարիտ ու բարոյական նորի սեփական ընկալմամբ: Իսկ ես խորապես հասկանում եմ, թե, հաջողության դեպքում, ինչ դժվարին ճանապարհ ունեն անցնելու, - դեմքի մտասույզ արտահայտությամբ ասում է Հայկը: - Մանկավարժի յուրօրինակ իմ աշխարհից, խոստովանեն, իմ ծավալելիք գործունեության նկատմամբ ես, պատկառանքից բացի, նաեւ բարոյական երկյուղ, ահռելի պատասխանատվություն ունեմ: Մի բարոյական երաշխիք ունեմ՝ իմ կուսակցությունն ինձ վստահում է ու իմ կողքին է, իսկ ես արժանի պիտի լինեմ այդ վստահությանը, իմ ընտրողների հավատին: Մյուսն էլ, վստահաբար կարող եմ ասել, ժամանակի հարգը իմանալու իմ սկզբունքն է: Հուսով եմ՝ ես կհասցնեմ: Իսկ դա ինձ համար ամենակարեւորն է, որովհետեւ բոլոր-բոլոր հարգանքներից ինձ համար ամենակարեւորը... հնքնահարգանքն է, որի կորուստը, իմ կարծիքով, վերջի է նման»:

Զգիտես՝ բարձրածայն մտածումն որպես, ինքնահանոգումն որպես, թե՞ ընտրողին ակամա ուղղված ուղերձ որպես, մեր գրույցն այսպես սկսեց Հայկը:

Ինքն իրեն ու իր անելիքին հավատում է:

Մայրը՝ տիկին Սիլվան, որ Հայկի մեջ զննահատում է դիմացինի հարգելու կարողությունն ու աշխատասիրությունը, պատմում է. «Հայկը միշտ էլ կանոնավոր էր, կուկի, հավաք ու զուսպ: Միուրեւ էր «կոնստրուկտոր», «մոզակա», շաշկի ու ֆուտբոլ խաղալ: Ես հանոզված եմ, որ նա ինչ էլ անի՝ պատմով ու իր ուժերի անմնացողը ճեղքումով է անելու: Պարզապես, միշտ էլ անհանգստանում եմ այն բանի համար, որ նրա աշխատասիրությունը գերբեռնվածության աստիճանի է հասնում: Հայկը պարտվել չէր սիրում, երեւի դա էլ նրան անվերջ ու ամեն հարցում մղում էր ինքնազարգացման: Ես նուրախ եմ որդուս համար, բայց մտահոգ եմ. նա առանց այն էլ հանգստանալ չէր հասցնում: Ինչ ասեմ՝ ինձ համար էլ շատ անակնկալ որոշում էր»:

Հայկի համար էլ, չի թաքցնում, ամենն այս հանկարծակի եղավ. «Գորիսի պետական համալսարանն ավարտելուց, ժառանգությունից ու տարբեր վերապատրաստումներ անցնելուց հետո, ես, որպես ուսուցիչ, աշխատանքի անցա վարժարանում: Աշխատանքային երեք տարիներս ինձ այնպես կապեցին դպրոցին ու մանկավարժությանը, որ ես կանաչ չունեմ՝ դա իմ աշխարհն է. անսահման հետաքրքրիչ է կյանքին դպրոցի աչքերով նայելը: Բայց զգում էի, որ կա կատարելագործման ու ժամանակներին առավել համահունչ քայլելու անհրաժեշտությունը: Վերջին երեք ամիսներին ես օրն ի բուն պարապում էի՝ կրթությունս Լոնդոնում շարունակելու համար: Փետրվարի վերջերին հանրապետական կուսակցության մեր տարածքային կազմակերպությունն ինձ առաջարկեց մտածել մեծամասնական շարունակությունը՝ էջ 6

ԻՆՉ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՔ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՑ

— Լավ պատգամավոր կդառնա: Կկարողանա մեզ հուզող հարցերը խորհրդարանում բարձրացնել:

— Նրա անմիջական մասնակցությամբ կընդունվեն կրթությանը վերաբերող իրական, կյանքից վերցված օրենքներ, որոնց շնորհիվ կբարձրանա ուսուցչի հեղինակությունը: Իսկ դրա կարիքը հիմա շատ կա: Միայն հիշենք, որ կոմի դաշտում հաղթած զինվորին, հայրենիքը պաշտպանող զինվորին ՈՒՍՈՒՑԻՉՆ է կրթել, դաստիարակել: Ուրեմն՝ կոմի դաշտում ՈՒՍՈՒՑԻՉՆ է հաղթել:

— ուղարկեմք Աժ, որովհետեւ դրանով է պայմանավորված լինելու ոչ միայն մեր, այլև մեր երեխաների ապագան:

— Ուրախալին այն է, որ այս անգամ ընտրողը լինելու է մեր կողքին, մեզ հետ:

— Սակայն ընտրելուց առաջ պետք է մտածել, թե մեր ընտրալը որքանով կարող է նպաստել երկրում իրականացվող տնտեսական, սոցիալական, մշակութային բարեփոխումներին, առանց որի անպատկեռացնելի է երկրի առաջընթացը:

— Այս անգամ գոնե պետք է մերժել տեղային մտածելակերպը եւ նոր մտածողություն ունեցող շնորհալի, օրինատեղծ աշխատանք կատարելու ընդունակություն ունեցող մարդ-

կանց համար ճանապարհ բացել դեպի Աժ:

...Քաղաքն այս, որ Գորիս է կոչվում, ժամանակների խորքից է գալիս ու ժամանակների խորքն է գնում՝ հայոց եռագույնի ապավինած: Եվ եռագույնի մեղմ ծիփանքում Գորիսն է. նրա որդիներն են, որ միշտ բարձր են պահում այս քաղաքի անունը: Գորիսը մեր Դիդոնն է, մեր պատիվը, մեր ծայրը, մեր ոգին ու արյունը:

Գենց այս քաղաքն է ապավինում Հայկին, վստահում, իր ծայրը տալիս նրան:

Իսկ դա ինքնին պարտավորեցնող է, ամենամեծ պատիվը՝ մարդ արարածի:

Պարոտպեց՝ ԱՎԿԱՐԿ ՄԵՏՐՈՊՅԱՆԸ

Փրկությունն ազատության գաղափարի իրագործման մեջ է

ՊԱՏՎԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՄԲԻՈՆ



Ինքնակենսագրություն

Օնվել եմ 1963թ. ապրիլի 29-ին Սյունիքի մարզի Ապահարյան գյուղում: Մանկությանս առաջին չորս տարին ապրել եմ գյուղում, որտեղ մանկավարժ ծնողներն արդեն տասնամյակից ավելի մեծ նվիրումով աշխատում էին գյուղի դպրոցում: 1967թ. տեղափոխվել եմք Սիսիան քաղաք: Հայրս երկար տարիներ ղեկավարել է Սիսիանի նոր հիմնադրված շինարարական տեխնիկումը, որտեղ բազմաթիվ երիտասարդներ շինարարի որակավորում են հիմնավոր աշխատանք ստացան Սիսիանի, Գորիսի, Լեռնային Ղարաբաղի, Կապանի, Մեղրու, Վայոց ձորի և այլ տարածաշրջաններից: Մայրս մնացյալ ողջ կյանքում աշխատել է Սիսիանի N3 միջնակարգ դպրոցում, որտեղ և ես սկսեցի սովորել 1970թ. սեպտեմբերի 1-ից:

Ի լրումն մեր ընտանիքում տիրող ուսումնական միջավայրի՝ դպրոցում մեզ շրջապատում էր հիանալի մանկավարժական սերունդ, որը մեզ ոչ միայն գիտելիքներ էր փոխանցում, այլև դաստիարակում որպես ազնիվ և կարգապահ քաղաքացի: Ես միշտ ակտիվ եմ եղել և ուսման մեջ, եւ հասարակական կյանքում. գերազանց ուսում բոլոր տարիներին, հետո՝ սպորտ, նկարչական դպրոց, արշավներ, ամառային ճամբարներ, հանելիտներն հոգնեցնող բակային խաղեր:

1980-85թ. սովորել եմ Երեւանի պետական բժշկական ինստիտուտում և ավարտել դեղագետի մասնագիտությամբ: Այս շրջանը մայրաքաղաք եկած պատանու համար կայացման, նոր գիտելիքների ձեռք բերման և աշխարհայացքի ձեւավորման հետաքրքիր տարիներ էին: Շրջաններից եկած ուսանողների համար, իհարկե, կային կենսապահովման դժվարություններ, սակայն այդ տարիներն առանձնահատուկ էին կենսունակության բարձրացման, ինքնուրույն ապրել սովորելու, պատասխանատվություն զգալու և որոշումներ կայացնելու առումով: Ծանոթանալով և ընկալելով բժշկագիտության ու մասնավորապես դեղագիտության հիմունքները՝ բուհական տարիներին ինձ մոտ ձեւավորվեցին կյանքի, մահվան, առողջության, հիվանդության վերաբերյալ գաղափարական և փիլիսոփայական մտորումների հիմքերը: Ապրելով խորհրդային իրականության մեջ և մաշկիս վրա զգալով այդ համակարգի բազմաթիվ արատները՝ միշտ զգայուն եմ եղել յուրաքանչյուր անարդարության, ամեն մի նսեմ արարքի նկատմամբ, և չնայած այդ պատճառով կրած դժվարություններին հանդիպած խնդիրներին՝ այդ հատկությունը պահպանել եմ մինչ օրս:

Ինչպես ընդունված էր այն ժամանակ, բուն ավարտելուց հետո գործուղվեցի Սյունիքի Ղարաբաս գյուղ, որտեղ հիմնեցի դեղատուն և աշխատեցի որպես դեղատան տնօրեն: Ղարաբասի ամբուլատորիայի բժշկի հետ մեկտեղ սպասարկում էինք Ձորերի տարածաշրջանի բնակչությանը: Հարաբերությունները բացառիկ էին բնակիչների հետ. մենք ուժերի և կարողությունների սահմաններում փորձում էինք դարմանել և օգնել նրանց, նրանք էլ մեզ շրջապատում էին ջերմությամբ, հարգանքով և երբեմն՝ գյուղի անուշաբույր բարիքներով: Ինձ բախտ էր վիճակվել ապրել «սահյանական» մեր չքնաղ բնաշխարհում, տեսնել, զգալ այն, բայց նաեւ խորությամբ ճանաչել այնուհետեւի, հասկանալ նրանց ու երկրամասի խնդիրները: Այդ ընթացքում ես նաեւ շատ եմ շրջապայել խորհրդային Սիւնիքյան տար-



ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ազգային ժողովի պարզամավորության թեկնածու N37 ընտրապարաժքում

բեր հանրապետություններում ու բազմաբնույթ ընթերցանությամբ լրացրել ու զարգացրել կրթությունս:

1988թ. սկիզբը շրջադարձային էր բոլորիս համար: Ես ավելի հաճախ էի գնում մայրաքաղաք, հետեւում քաղաքական գործընթացներին, մասնակցում ցույցերին: Երկրաշարժն ինձ պոկեց Ղարաբասից, և ես մեկնեցի աղետի գո-

տի՝ Սպիտակ, որտեղ բժշկական շտաբում մեր հայրենակիցների ու արտասահմանից ժամանած բազմաթիվ բուժաշխատողների հետ հոգում էինք տուժածների առողջական խնդիրները:

Դա նաեւ այն ժամանակաշրջանն էր, երբ Հայաստանը բացվել էր աշխարհի առջեւ, նոր մարտահրավերներ էին առաջացել, անհրաժեշտ էր գիտակցել դրանք,

ընկալել դրանց տնտեսական, քաղաքական, կրթական և մշակութային բաղադրիչները: Այդպես, 1989-1995թթ. ընթացքում Արտաշատում և Երեւանում դեղագործական գործունեության հետ մեկտեղ, 1992թ. ընդունվեցի Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարար կառավարման երկամյա մագիստրատուրա: Ուսուցումն անգլերեն **Շարունակությունը՝ էջ 8**

Գյուղը

Հատված Թաթուլ Հակոբյանի նախընտրական ծրագրից

Իմ հասունության տարիների լավագույն հիշողությունների մեջ տպավորվել է հորս պատմությունը, թե ինչպես էր ինքը մեր գյուղում դպրոց կառուցում: Երիտասարդ մանկավարժը, որն այդպիսի մի գյուղական դպրոց ավարտելով, ընդունվել և ավարտել էր համալսարանը, լավ գիտակցում էր, որ գյուղի կարմրաթուշ, վառվռուն աչքերով երեխաների ապագան մեծապես կախված է դպրոցում նրանց տրվող գիտելիքներից և հմտություններից: Այնտեղ հայրս գոհունակությամբ և իմաստուն ժպիտով պատմում էր, թե ինչպես վերանորոգեց, կահավորեց դպրոցը, մշակեց, բարելավեց ուսումնական ծրագրերը, ստեղծեց այնպիսի պայմաններ, որ նույնիսկ շրջկենտրոնի ուսուցիչները հաճույքով դասավանդում էին այդ դպրոցում: Խիստ կլիմայական պայմաններ ունեցող այդ գյուղում, որտեղ բնակիչները հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ, որտեղ միակ բուստանային կուլտուրան կարտոֆիլն էր, հայրս դպրոցի բակում տնկեց առաջին խնձորենիները, որոնք հետագայում տարածվեցին ամբողջ գյուղում: Դպրոցյան շունչն ակտիվացրեց գյուղը, համերաշխության ծիլեր տվեց, սկսեց ակտիվ աշխատել ակումբը, կանոնակարգվեցին հողարկավորության արարողությունները և տոնակատարությունները: Հայրս երջանիկ էր իր շրջանավարտների առաջադիմությամբ ու հաջողություններով, նաեւ՝ որ այդ դպրոցը միակ կրթական հաստատությունն էր իր մանկավարժի ամբողջ կյանքում, որն իրեն գոհունակություն և բերկրանք էր պարգևել:

Ծիշտ է, այդ ամենը կատարվել էր սովետական կարգերի օրոք, բայց ես ամենեւին չեմ գուցարում սովետական գյուղը: Ես ուզում եմ շեշտել, որ անգամ սովետական իրականության պայմաններում, երբ կուլակաթափությունն ու համատարած բռնի կոլեկտիվացումը հանգեցրել էին գյուղի բուն եության ոչ միշտ նպաստավոր փոփոխությանը, հաճախ՝ ընդհանուր համարվող հողատարածքների նկատմամբ ոչ սրտացավ վերաբերմունքին, անգամ՝ օտարացմանը, երբ պլանային ու անմրցունակ տնտեսությունը գյուղացիներին թույլ չէր տալիս հարստանալ ու հարստացնել երկիրը, մեկ դպրոցի կայացումը կամ կրթության կարելությունը գիտակցումը, սերնդի նկատմամբ նույնիսկ մեկ մարդու սրտացավությունը կարողացել էր այդքան բարի պատուհներ տալ:

Ներկայումս, ամեն անգամ, երբ այցելում եմ հայաստանյան որեւէ գյուղ և տեսնում գյուղի նույն կարմրաթուշ, վառվռուն աչքերով երեխաներին, ապա՝ առկա անմխիթար վիճակը, մտորում եմ, թե ինչ արժեք ունենի երիտասարդ մանկավարժի խոհերն ու գործերը մեկ գյուղի համար: Ես տարակուսում եմ, թե ո՞րն է գյուղի դերն այսօրվա մեր կյանքում, թե ունի՞ արդյոք գյուղն ապագա, և ո՞րն է այդ ապագան:

Վերջին այցելությունս գյուղ Ամառոտին էր: Կյանքի նշույլները դարձյալ կարմրաթուշ և վառվռուն աչքերով մանուկներն էին, որոնք Համո Սահյանի բնորոշմամբ՝ «ինձ աչքերով ինձ նայող մանկության» վկաններն էին: Ինքնաշեն սահմակներով, առանց գլխարկի ու ձեռնոցի տուրում էին կիսածյուն-կիսացեխ փոքրիկ զոգավորության վրայով: Ամհանգստացա նրանց առողջության համար, մտքիս ճառագայթներով ուշադիր գննեցի նրանց. նրանք բոլորովին չէին մրսում, կյանքը եռում էր մեջները, առողջ էին ու մաքուր:

Շարունակությունը՝ էջ 8

Փրկությունն ազատության գաղափարի իրագործման մեջ է



ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՍԲԻՈՆ

ԹԱԹՈՒԼ ՆԱԿՈՒՅԱԼ

Ազգային ժողովի պարզամավորության թեկնածու №37 ընտրատարածքում

Սկիզբը՝ էջ 7

եր, դասախոսները՝ Միացյալ Նահանգներից, պահանջները՝ բավական ծավալուն: 1995-1997թթ. սովորեցի եւ ավարտեցի Մուլեն համալսարանի եւս մեկ երկամյա մագիստրատուրա՝ «Համայնի առողջություն», եւ համադրելով իմ կրթական, հետազոտական, գործնական աշխատանքի ամբողջ փորձը՝ ստացա հանրային առողջության մագիստրոսի կոչում: Համայնի առողջությունը դարձավ իմ հետագա մասնագիտական գործունեության եւ զարգացման ամենահիմնական ոլորտը:

պահության մասին» եւ «Գեղերի մասին» օրենքների նախագծերը: Եղել եմ միջազգային համագործակցության պատասխանատուն, նոր ծրագրեր եմ մշակել եւ խթանել ու ավելացրել միջազգային կազմակերպությունների աջակցությունը, մասնակցել եմ բազմաթիվ միջազգային ֆորումների, սեմինարների, որտեղ հանդես եմ եկել զեկուցումներով, դասախոսություններով: Մասնագիտական կատարելագործման դասընթացների եմ մասնակցել Հունաստանում եւ Իսրայելում, 2007-2010թթ. ընտրվել եմ Պատվաստանյութերի եւ իմունոգիացիայի համաշխարհային ասոցիացիայի կառավարման խորհրդի անդամ եւ որպես միջազգային փորձագետ համագործակցել եմ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ: Թվարկած եւ բազմաթիվ չթվարկած այլ քայլերի հետ մեկտեղ, իմ հիմնական խնդիրը եղել է՝ որակապես փոխել կառավարման համակարգը, աշխատանքի իրավիճակը, ազդել է բարձր որակավորում ունեցող մասնագետների, նպաստել նրանց առաջընթացին ու զարգացմանը եւ, վերջապես, ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել բնակչության ու բուժաշխատողների սոցիալական, առողջության, բարեկեցության եւ արժանապատվության խնդիրները: Որպես պաշտոնյա՝ իմ դուրը բաց է եղել բոլորի համար, եւ ազդվորել փորձել եմ ծառայել ժողովրդին ու պետությանը:

Հուտով ներգրավվեցի միջազգային առողջապահական ծրագրերի մեջ: 1996-1999թթ. աշխատել եմ ամերիկյան UMCOR բարեգործական կազմակերպությունում, սկզբում որպես բժշկական ծրագրերը վերահսկող, իսկ վերջում՝ առողջապահական ծրագրի ղեկավար: UMCOR-ն իրականացնում էր մարդասիրական եւ զարգացման ծրագրեր, եւ այդ տարիներին Հայաստանի հարյուր հազարավոր քաղաքացիներ օգուցվելու ստացան:

2010թ. նոյեմբերին գործող նախարարի հետ գաղափարական եւ այլ տարածայնությունների պատճառով, իմ դիմումի համաձայն հրաժարվել եմ պաշտոնից: Հինգ ամիս ՀՀ Ազգային ժողովում որպես խորհրդատու աշխատելուց հետո աշխատանքի եմ հրավիրվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական գրասենյակ, որը տեղակայված է Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում: Անցած մեկ տարվա ընթացքում խորապես ուսումնասիրեցի տարբեր երկրների փորձը, համայն առողջության եւ համակարգային փոփոխությունների քաղաքական, սոցիալական եւ բնապահական չափորոշիչները, համակարգերի գործունեության իրավական հիմքերը, օրենսդրության բարելավման մեթոդներն ու մեխանիզմները: Անցած ճանապարհը եւ կենսափորձն ինձ մղում են աշխատանքի ՀՀ օրենսդիր մարմնում, որովհետեւ վստահ եմ, որ նոր ծեսավորվող Ազգային ժողովը մեծ դեր է ունենալու մեր երկրի զարգացման եւ ժողովրդի կենսամակարդակի բարելավման գործում: ■

1999թ. մարտին հրավիրվեցի աշխատելու ՀՀ առողջապահության նախարարություն՝ որպես Ապահովվածության գլխավոր վարչության պետ: Կարճ ժամանակահատվածում վարչությունը կայացավ, աշխատանքները կանոնակարգվեցին, աշխատակիցներն ապահովվեցին ժամանակակից համակարգիչներով, բոլորը ուսումնական դասընթացներ անցան, փոխվեց կառավարման ոճը, բազմաթիվ ծրագրեր մշակվեցին: Սակայն ծավալվելու հնարավորությունները սահմանափակ էին, որովհետեւ դեռեւս հետադեմ բյուրոկրատական մեքենան կասեցնում էր առաջընթացը: 2000թ. հուլիսին ազատվեցի վարչության պետի պաշտոնից եւ աշխատանքի անցա ամերիկյան ABT Associates խորհրդատվական ընկերությունում՝ որպես առողջապահության քաղաքականության հարցերով ավագ խորհրդատու: Աշխատանքը հիմնականում տարվում էր առողջապահության նախարարության հետ, սակայն ընդգրկում էր սոցիալական ավելի լայն ոլորտ:

2002-2010թթ. զբաղեցրել եմ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը: Այս տարիները եղել են բեղուն բոլոր առումներով: Համակարգել եմ քաղաքականության մշակման եւ օրենսդրության բարելավման աշխատանքները, մշակել եմ ՀՀ բնակչության առողջության պահպանման 2004-2015թթ. քաղաքականության ծրագիր, համահեղինակել եմ ՀՀ «Առողջա-



գ. ԱՐԵՎԻԿ

Գյուղը

Սկիզբը՝ էջ 7

Երնեկ այդպես մնան ամբողջ կյանքում...

Սակայն շրջապատում ոչինչ չի փոխվել, ավելի ճիշտ, համուռ ճշմարտության պետք է ասել. փոխվել է միայն դեպի վատը: Գյուղին յուրահատուկ բարբառը շարունակվում է աղավաղվել եւ աղավաղել առանց այն էլ աղավաղված միայն: Իսկ դրսի աշխարհի հետ միակ կապը իբր պահպանվել է «հեռուստատեսություն» առավելագույնս պոտորում եւ գյուղացու հոգին՝ հեռաձայնակով բռնություն, ճոճիմ բարբեր, ստոր գագցնունքներ ու արարքներ՝ դրանով լրացնելով ցեխի ու կեղտի մեջ ապրող, կոյուղու համակարգ չունեցող համայնքներում աթարի վրա կուտակվող գարշահոտությունը:

մապատասխան տեխնիկայի, մեծ տանջանքով ստեղծվող արտադրանքը պարզապես թալանվում է մեծ ու փոքր սպեկուլյանտների կողմից՝ տառապանք ու հուսալքություն պատճառելով ճորտի կարգավիճակում հայտնված գյուղացուն: Այո, ճորտի, որովհետեւ իրենց հողը չեն կարողանում մշակել եւ եկամուտ ստանալ, ճարահատյալ աշխատում են ուրիշի՝ խոշոր հողատերերի համար, իսկ ճորտական վիճակը սերմանում է ճորտի բարբեր ու հոգեբանություն. գյուղացին, ազնիվ, արդար վաստակով ապրող գյուղացին դառնում է աշխարհորդ ու անտարբեր իր իսկ հայրենի հողի նկատմամբ: Ճարպիկ ու գործնական երկրասարդները հեռանում են այլ երկրներ, որ դարձյալ ճորտի կարգավիճակում վաստակած գումարի մի մասն ուղարկեն իրենց հարազատների զուտ ֆիզիկական գոյատևումն ապահովելու համար:

ծիկները, որոնք այլ միջավայրում այդպիսին չեն կարող ծնվել: Նրանք են այսօրվա հայկական գյուղի մնացած միակ արժեքը, եւ մերն է այդ արժեքը փրկելու, իր բնական միջավայրում պահպանելու պատասխանատվությունը: Եւ ես մտածում եմ...

Իմ փոքրիկ հերոսների աշխույժ, թովում միջավայրում կենցաղն ու ապրելակերպը լավագույնս դրոշմված են կորուկն ու ուժը կորցրած անիթ թե ջախել գյուղացիների ճկված մարմիններին, կնճռոտված դեմքերին, անհուսությամբ մարող աչքերում: Գյուղի սովորաբանի առանձնահատկությունները վերածվել են ախտանիշերի՝ առավելապես թղթախաղի ու ալկոհոլիզմի տեսքով:

Եվ ես մտածում եմ՝ մարդը որքան առավել սահմանափակվում է քաղաքակրթական ծրագրերում, այդքան առավել էլ զգում է բնական էակ լինելու անսահմանությունը: Իսկ այդ անսահման էությունը շոշափելի է դառնում միայն գյուղական բնաշխարհում: Ի վերջո, Ազատ բնությունը ոչնչով հնարավոր չի փոխարինել, եւ չկա առավել բնական ու գերակա հաճույք, քան բնության ազատության վայելքը: Միայն այդ վայելքի տարբերում է, որ մեր երկրում խորքերում սաղմնավորվում է բնության մասը լինելու իրական զգացողությունը: Իսկ այդ զգացողությունն աստիճանաբար վերածվում է գիտակցության, որ մարդն ինքը եւս բնականորեն ազատ է: Բնական ազատության գիտակցության պարզեւած բերկրանքն անխուսափելիորեն գործեցնում է սեր. մարդը սկսում է սիրել բնության այն մասնիկը, բնաշխարհի այն կտորը, որտեղ միախլուսվել է բնությանն ու Ազատությանը, եւ սիրելով՝ սկսում է հոգ տանել, մաքրել, պաշտպանել, իրենց, մշակել այդ կտորը, վերածել իր լիարժեք ինքնաբացահայտման, ինքնարտահայտման համար բարենպաստ միջավայրի:

Ծերացել է հայկական գյուղը, հոգնել, կորցրել առողջությունն ու դիմադրությունը: Հայկական գյուղը մահաճերձ է, եւ հոգեվարքի շնչահեղձ ցնցումների մեջ խորտակվում են կարմրաթուշ, վառվում աչքերով, ժիր ավուղով լի, առողջ իմ մանկության վկաների կյանքի երագները. անպաշտպան, անկրթության ու խավարանտության, կեղտի ու ախտերի հանդեպ խցելի՝ հայ կյանքի այս կայ-

Եվ ես մտածում եմ. գյուղի մոր շունչն ուրե՞նք Ազատության շունչն է՝ մարդու անենամահական, անենաբնական պահանջը: Եվ գյուղի ապագան, գյուղի փրկությունը են տեսնում եմ միայն ազատության գաղափարի իրագործման մեջ: Նոր գյուղերը պետք է ծնվեն որպես բնական ազատության օազիսներ, ուր կծափեն այդ ծարավով տոչորվող մարդիկ, եւ որտեղ վառվում աչքերի կյանքի երագները կիմաստավորվեն իրականության մեջ: ■

ԿՈՐԵԼ Է Սյունիքի մարզի Ուժանիսի գյուղապետարանի կլոր կնիքը: Համարել անվավեր:

Շնորհակալություն 2012թ. ապրիլի մեկին առողջության վատթարացման պատճառով տեղափոխվեցի հիվանդանոց: «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատակիցների՝ մասնավորապես թերապեւտիկ բաժնի վարիչ Գայանե Այվազյանի եւ ինձ բուժող բժշկուհի Մարինե Քոչարյանի ցուցաբերած հոգատարության շնորհիվ կարճ ժամանակում առողջական վիճակս բարելավվեց: Երախտագիտությունս եմ հայտնում Կապանի բժշկական կենտրոնի ողջ անձնակազմին՝ ի դեմս Գայանե Այվազյանի եւ Մարինե Քոչարյանի: **Չնորհիվ Աբրահամյան, ք. Կապան, Ձորից 4/17**

Այունյաց երկիր

S U N I O R S U Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵԶԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՐ - ԾԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկիր» պարտադիր է:

Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.04.2012թ.: